

16.02.2012թ.

գ. Ախպրաձոր

Տեղի ունեցավ Գեղարքունիքի մարզի Ախպրաձոր համայնքի ընդհանուր ժողով:

Ժողովին մասնակցում էին համայնքի բնակիչներ, ավագանու անդամներ և մարզպետարանի աշխատակից:

Ժողովի նախագահ Լ. Ղազարյան /համայնքի ղեկավար/

Ժողովի քարտուղար Ա. Գալստյան/աշխատակազմի քարտուղար/

Օրակարգ

1.Ախպրաձոր համայնքի ղեկավար Լ. Ղազարյանի 2011թվականի կատարած աշխատանքների մասին:

Զեկուցողն մանրամասն ներկայացրեց Ախպրաձոր համայնքում 2011թվականի ընթացքում կատարած աշխատանքների մասին հաշվետվությունը:

Հաշվետվությունում վեր հանվեց համայնքի սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման ուղղությամբ համայնքի ղեկավարի և գյուղապետարանի աշխատակազմի կողմից ձեռնարկված միջոցառումները: Ինչպես համայնքի բյուջեի կատարման, այնպես էլ համայնքում առկա խնդիրների լուծման ուղղությամբ /համայնքի ղեկավարի հաշվետվությունը կցվում է/:

Հաշվետվության շուրջ ծավալված մտքերի փոխանակությանը մասնակցեցին համայնքի ավագանին և բնակիչները:

Համայնքի բնակչության կողմից առաջարկվեց համայնքի ղեկավար Լ.Ղազարյանի կողմից կատարված աշխատանքները գնահատել բավարար:

Համայնքի ընդհանուր ժողովը

ՈՐՈՇԵՑ՝

1.Համայնքի ղեկավար Լ. Ղազարյանի 2011թվականի կատարած աշխատանքների հաշվետվությունը գնահատել բավարար:

2.Պահանջել համայնքի ղեկավար Լ. Ղազարյանից և գյուղապետարանի աշխատակազմից 2012թվականի ընթացքում իրենց գործունեությունը նպատակաուղղել համայնքում առկա խնդիրների լուծմանը, համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման կատարմանը և այդ մասին պարբերաբար իրազեկ պահել համայնքի ավագանուն և նակչությանը:

Ժողովի նախագահ՝

Լ.Ղազարյան

Քարտուղար՝

Ա. Գալստյան

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ախպրաձոր համայնքի ղեկավար Լ. Ղազարյանի 2011թվականի կատարած աշխատանքների մասին:

Հարգելի համագյուղացիներ, հյուրեր և ավագանու անդամներ, Ձեզ եմ ներկայացնում հաշվետվություն՝ 2011թվականին և իմ կողմից Ախպրաձոր համայնքում կատարած աշխատանքների և բյուջեի կատարման մասին:

Ախպրաձոր համայնքում կա 101 տնտեսություն և ապրում է 373բնակիչ, որից շուրջ 10%-ը փաժստականներ են:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» և Հայաստանի Հանրապետության «Համայնքային ծառայության մասին» օրենքով, համայնքի ՏԻՄ-երը իրենց գործունեությունը հիմնականում նպատակաուղղվել են համայնքի բնակչության հոգսերի և խնդիրների լուծմանը, համայնքում առկա սոցիալ-տնտեսական հիմանխնդիրների բարելավման հարցին: Այդ ընթացքում համայնքում իրականացվել է մի շարք ծրագրեր:

2011թ. գյուղապետարանի միջոցներով հարթեցվել և բարեկարգվել է գյուղամիջյան ճանապարհները, համայնքի ազգաբնակչության միջոցով մաքրվել է ոռոգման ցանցի ջրատարը, կատարվել է խմելու ջրագծի շուրջ 270զձմ. վերանորոգման և մաքրման աշխատանքները:

Միաժամանակ տեղեկացվում է, որ չնայած կատարված աշխատանքներ՝ համայնքում դեռևս առկա է մի շարք հիմնախնդիրներ, կապված ոռոգման ցանցի, խմելու ջրի, համայնքային կենտրոնի և գազաֆիկացման, որի հնարավորությունը գյուղապետարանը չունի, խնդիրների լուծումը ընդգրկված է համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագրում և ներկայացվել է վերադաս մարմիններին:

2011թվականի ընթացքում համայնքի բնակիչների կողմից ստացվել է տարբեր բնույթի 18դիմում, որոնց տրվել է համապատասխան ընթացք և լուծում:

2011թվականի ընթացքում կայացել է ավագանու 8 նիստ:

Համայնքի բնակչությունը հիմնականում զբաղված է գյուղատնտեսությամբ և անասնապահությամբ:

Ախպրաձորի գյուղապետարանի աշխատակազմը բաղկացած է 5 հոգուց, իսկ համայնքի ավագանին բաղկացած է 5 անդամից:

Համայնքի վարչական տարածքը 2483հա է, որից վարելահող՝ 732հա, տնամերձ՝ 49հա և 1658հա այլ տեսքի հողեր:

2011թվականի համայնքի բյուջեի սեփական եկամուտները կազմում է 4850.0հազ. դրամ, որի հավաքագրումը գյուղապետարանի կողմից կատարվել է 87%-ով:

Բյուջեն ըստ սեփական եկամուտների մասին հետևյալն է.

h/h	Եկամուտների անվանումը	Նախատեսված /հազ.դրամ/	Վաստացի /հազ.դրամ/	Կատարված %-ը
1	հողի հարկ	2435.5	1885.4	78
2	գույքահարկ	74.6	106.0	142.0
3	Հողի վարձավճար	2300.0	2132.0	93

Բյուջեի ծախսը աշխատավարձի և սոց հատկացման հողվածներով՝

ա/աշխատավարձ՝ 2520.0 հազ. դրամ

բ/սոց. հատկացում 620.0 հազ.դրամ

ԱԽՊՐԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Լ.ՂԱԶԱՐՅԱՆ